ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2, Հեռ. 060 68 02 12, թեժ գիծ՝ 8520, Ֆաքս 233600, էլ.փոստ: info@msib.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն N 593-Լ-10.07.2025Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 564-Լ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 20.03.2025Թ. ԹԻՎ 334-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱԿՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ, ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏԿԱՆՉԻ, ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱԴՐԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 10-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 732-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 11-րդ ենթակետի, «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.2–րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2021թ. նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի կողմից արձակվող կարգադրագրերի ձևերը հաստատելու մասին» 564-Լ որոշումը՝ ՀՀ կառավարության 20.03.2025թ. թիվ 334-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 22.09.2025թ.–ից:

2. Հաստատել՝

Շուկայի վերահսկողություն իրականացնող.

1) տեսչական մարմնի կողմից արձակվող արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի իրացման կասեցման, արտադրանքի հետկանչի, օգտահանման կամ ոչնչացման մասին կարգադրագրի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 22.09.2025թ.–ից:

X

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության
տեսչական մարմնի ղեկավարի
2025 թվականի հուլիսի 10-ի N 593-L հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

_____
տնտեսավարող սուբյեկտի անվանումը

_____
ղեկավարի անունը, ազգանունը

_____
տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ա Գ Ի Ր N____ «__»_____ 20 թ.

☐ **ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ**
☐ **ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏԿԱՆՉՄԱՆ**
☐ **ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ**
☐ **ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ**

Տրված է՝

☐ «__»_____20 թ. N____ ստուգման ակտի հիման վրա:

☐ Ստուգման ընթացքում օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակում:

Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության ընթացքում բացահայտվել է, որ ստուգված արտադրանքը՝

_____
արտադրանքի անվանումը, ԱՏԳ ԱԱ ծածկագիր, ապրանքի քանակը

չի համապատասխանում տեխնիկական կանոնակարգերի պահանջներին

_____
_____

տեխնիկական կանոնակարգերի անվանումը, խախտված կետերը

«Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետին, ինչպես նաև Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.3-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Արգելել՝

☐ սույն կարգադրագրում նշված արտադրանքի կամ արտադրանքի խմբաքանակի իրացումը:

☐ Սույն կարգադրագրում նշված արտադրանքը կամ արտադրանքի խմբաքանակը հետկանչել:

☐ Սույն կարգադրագրում նշված արտադրանքը կամ արտադրանքի խմբաքանակը: ոչնչացնել.

☐ Սույն կարգադրագրում նշված արտադրանքը կամ արտադրանքի խմբաքանակը օգտահանել:

2. Սույն կարգադրագրում նշված պահանջների կատարման ժամկետ սահմանել մինչև «___»_____20 թ.:
3. Սույն կարգադրագրի կատարման մասին գրավոր տեղեկացնել Շուկայի վերահսկողության տեսչական մարմին մինչև «_____»_____20 թ.:

«Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգադրագրի կատարման վերաբերյալ սահմանված ժամկետում լիազոր մարմնին գրավոր չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում:

_____ _____

Տեսչական մարմնի
պաշտոնատար անձ՝

ստորագրություն անուն, ազգանուն